

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Սեմուր ընդ Կո» ՍՊԸ

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սեմուր ընդ Կո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվի, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Փոքր ու Միջին Կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի համաձայն (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի (ՀԷՄՍԽ կանոնագիրը), և պահպանել ենք ՀԷՄՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Գլոբ Աուդիտ» ՍՊԸ

Տնօրեն Դ. Հարությունյան

Աուդիտոր Ս. Հովսեփյան

29 հունիս, 2021թ.



ք. Երևան




«Սեմուր ընդ Կո» ՍՊ Ընկերություն
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Հասույթ	3	5,996,034	5,706,976
Վաճառքի ինքնարժեք	4	(4,890,005)	(5,011,888)
Համախառն շահույթ		1,106,029	695,088
Գործառնական այլ եկամուտներ	3	684,172	692,533
Իրացման ծախսեր	5	(354,099)	(365,342)
Վարչական ծախսեր	6	(216,366)	(224,912)
Գործառնական այլ ծախսեր	7	(575,065)	(613,518)
Ֆինանսական եկամուտ/(ծախսեր)	8	(228,777)	(210,506)
Այլ ոչ գործառնական շահույթ/վնաս (զուտ)	9	(201,704)	60,437
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ		214,190	33,780
Շահութահարկի գծով ծախս		(75,321)	(3,088)
Տարվա շահույթ		138,869	30,692
Զբաղիված շահույթներ տարեսկզբի դրությամբ		31,128	194,436
Շահաբաժին		(31,000)	(194,000)
Զբաղիված շահույթներ տարվերջի դրությամբ		138,997	31,128

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. հունիսի 29-ին:


Տնօրեն Գորգեն Վիրաբյան
 Գլխ. հաշվապահ Էլեննորա Գևորգյան




**«Սեմուր ընդ Կո» ՍՊ Ընկերություն
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

	Ծնթ.	2020թ.	2019թ.
		<u>Հազար դրամ</u>	<u>Հազար դրամ</u>
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ	10	280,404	156,574
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	11	34,509	48,423
Պաշարներ	12	2,194,641	1,758,671
Տրված փոխառություններ	13	422,411	349,997
Ավարտվածության աստիճանով որոշվող հետաձգված ծախս		2,239	2,255
Այլ ընթացիկ ակտիվներ	11	238,487	298,606
		3,172,691	2,614,526
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	14	588,797	621,710
Ոչ նյութական ակտիվներ		13,890	9,759
Հետաձգված ծախսեր	15	146,757	112,176
Տրված կանխավճարներ		16,731	-
		766,175	743,645
Ընդամենը ակտիվներ		3,938,866	3,358,171
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	16	845,818	397,653
Ֆինանսական վարձակալության կարճաժամկետ մաս	17	41,640	28,420
Օվերդրաֆտ	18	27,629	47,650
Առևտրական կրեդիտորական պարտքեր	19	819,061	756,033
Կարճ.կրեդիտ.պարքեր մասնակիցներին (հիմնադիրներին)		31,000	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		1,765,148	1,229,756
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	16	1,990,256	2,039,874
Ֆինանսական վարձակալություն	17	44,410	57,358
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		2,034,666	2,097,232
Ընդամենը պարտավորություններ		3,799,814	3,326,988
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	20	50	50
Պահուստային կապիտալ		5	5
Զբաղխված շահույթներ		138,997	31,128
Ընդամենը սեփական միջոցներ		139,052	31,183
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		3,938,866	3,358,171

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են դեկլարության կողմից 2021թ. հունիսի 29-ին:


Տնօրեն Գուրոգեն Վիրաբյան





Գլխ. հաշվապահ Էլենոնրա Գևորգյան


**«Սեմուր ընդ Կո» ՍՊ Ընկերություն
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

	Կանոնադր ական կապիտալ	Պահուստ ային կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 31.12. 2018թ	50	5	194,436	194,491
Տարվա զուտ շահույթ/(վնաս)	-	-	30,692	30,692
Շահաբաժին	-	-	(194,000)	(194,000)
Մնացորդն առ 31.12. 2019թ	50	5	31,128	31,183
Տարվա զուտ շահույթ/(վնաս)	-	-	138,869	138,869
Շահաբաժին	-	-	(31,000)	(31,000)
Մնացորդն առ 31.12. 2020թ	50	5	138,997	139,052

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. հունիսի 29-ին:


Տնօրեն Գորգեն Վիրաբյան





Գլխ. հաշվապահ Էլեննորա Գևորգյան

**«Սեմուր ընդ Կո» ՍՊ Ընկերություն
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

	2020թ. <u>Հազար դրամ</u>	2019թ. <u>Հազար դրամ</u>
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Արտադրանքի, ապրանքների, ծառայությունների գծով վճարումներ	7,995,202	7,779,204
Գնումների դիմաց վճարումներ	(4,940,177)	(4,284,159)
Ծառայությունների գծով վճարումներ	(707,037)	(632,432)
Աշխատավարձի գծով վճարում	(446,006)	(439,285)
Հարկերի և պարտադիր վճարների գծով վճարումներ	(1,595,794)	(1,642,824)
Այլ գործառնական ելքեր	(50,620)	(24,659)
	<u>255,568</u>	<u>755,845</u>
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ		
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Փոխառությունների տրամադրում	(139,080)	(214,350)
Տրամադրված փոխառությունների մարում	72,496	40,000
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով վճարումներ	(27,548)	(36,806)
	<u>(94,132)</u>	<u>(211,156)</u>
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր		
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Վարկերի և փոխառությունների ստացում	8,752,327	7,938,656
Ստացված վարկերի և փոխառությունների մարում	(8,575,646)	(7,939,398)
Տոկոսների վճարում	(221,705)	(207,052)
Շահաբաժինների վճարում	-	(184,300)
	<u>(45,024)</u>	<u>(392,094)</u>
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր		
Դրամական միջոցների զուտ աճ/(նվազում)	116,412	152,595
<i>Արդարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների վրա</i>	7,418	240
<i>Դրամական միջոցներ պարեսկզբի դրությամբ</i>	156,574	3,739
	<u>280,404</u>	<u>156,574</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. հունիսի 29-ին:


Տնօրեն Գուրգեն Վիրաբյան Գլխ. հաշվապահ Էլենոորա Գևորգյան

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1	Ընդհանուր տեղեկատվություն	10
	Պատրաստման հիմունքներ - հաշվապահական հաշվառման	
2	քաղաքականության հիմնական մոտեցումներ	10
3	Եկամուտներ ձեռնարկատիրական գործունեությունից	17
4	Ինքնարժեք	17
5	Իրացման ծախսեր	17
6	Վարչական ծախսեր	18
7	Գործառնական այլ ծախսեր	18
8	Ֆինանսական ծախսեր	18
9	Այլ ոչ գործառնական շահույթ/վնաս	19
10	Դրամական միջոցներ	19
11	Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	19
12	Պաշարներ	20
13	Տրված փոխառություններ	20
14	Հիմնական միջոցներ	21
15	Հետաձգված ծախսեր	22
16	Վարկեր և փոխառություններ	22
17	Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	22
18	Օվերդրաֆտ	22
19	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	23
20	Շահութահարկ	23
21	Այլ բացահայտումներ	23

1 Ընդհանուր տեղեկատվություն

«Մեմուր ընդ Կո» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 2002 թվականի հունվարի 21-ին:

Ընկերության միակ մասնակիցը Գուրգեն Վիրաբյանն է:

Ընկերության կանոնադրությունը գրանցվել է 21.01.2002թ. Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, գրանցման համար՝ 286.110.04450, գրանցման վկայական՝ 03Ա-855602, հարկ վճարողի հաշվառման համար՝ 02560685:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ 2401, ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Երևանյան խճուղի 118:

Ընկերության հիմնական գործունեությունն է.

- ✓ կղմինդրի, պրոֆնաստիլի, թիթեղի, պրոֆիլի, տանիքի համալրող դետալների, մետաղական ապրանքների, ցանցերի և այլ շինարարական ապրանքների արտադրություն;
- ✓ ավտոտեխսպասարկման, բեռնափոխադրման և օրենքով կամ այլ իրավական ակտերով չարգելված այլ գործունեություն:

Ընկերության մասնակիցների ցուցակը ներկայացված է ստորև՝

Մասնակից մասնաբաժին

Գուրգեն Վիրաբյան 100%

Աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2020թ. 212 անձ է և 2019թ.՝ 216:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը մասնակիցների (կամ նրանց լիազոր ներկայացուցիչների) ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

2 Պատրաստման հիմունքներ-հաշվապահական քաղաքականության հիմնական մոտեցումներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների օգտագործում

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալ օրվա միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ.

ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,

բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական գործիքներ

Կազմակերպությունում առկա են հետևյալ ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները.

- առևտրական և այլ դեբիտորական պարտքեր,
- առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր,
- դրամական միջոցներ և համարժեքներ,
- վարկեր և փոխառություններ:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Հետագայում հիմնական միջոցները չափվում են իրական արժեքով՝ հիմք ընդունելով արտաքին անկախ գնահատողների կողմից իրականացված գնահատման արդյունքները հանած հետագա մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս առևտրային զեղչերը և արտոնությունները հանվում են:

«Մեմուր ընդ Կո» ՄՊ Ընկերություն
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Կազմակերպությունը հիմնական միջոցի միավորը, որի իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել, պետք է չափի վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրա իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Վերագնահատումները պետք է կատարվեն բավարար պարբերականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքը **էականորեն** չտարբերվի **հաշվետու ժամանակաշրջանի** վերջի դրությամբ իրական արժեքից: Եթե հիմնական միջոցի միավորը վերագնահատվում է, հիմնական միջոցի ամբողջ դասը, որին պատկանում է այդ ակտիվը, պետք է վերագնահատվի:

Եթե ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվի սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում: Այնուամենայնիվ, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվների նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում՝ այն չափով, որով նախապես նվազումը ճանաչվել էր շահույթում կամ վնասում: Եթե ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, նվազումը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում այն գումարի չափով, որը չի գերազանցում այդ ակտիվների գծով վերագնահատումից արժեքի աճի առկա կրեդիտային մնացորդը: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված նվազումը պակասեցնում է սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում կուտակված գումարը:

Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Եթե հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչներն ունեն տնտեսական օգուտների սպառման նշանակալիորեն տարբեր մոդելներ, կազմակերպությունը ակտիվի սկզբնական արժեքը պետք է բաշխի դրա հիմնական բաղադրիչներին և մաշեցնի այդ բաղադրիչներից յուրաքանչյուրն առանձին՝ դրանց օգտակար ծառայության ընթացքում: Այլ ակտիվները պետք է մաշեցվեն իրենց օգտակար ծառայությունների ընթացքում՝ որպես առանձին ակտիվ: Հողամասը որոշ բացառություններով, ինչպիսիք են թափոնների համար նախատեսված տարածքներն ու ամբարները, ունի անսահմանափակ օգտակար ծառայություն, հետևաբար չի մաշեցվում:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար մաշվածության գումարը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում, բացառությամբ երբ ՖՀՄՍ-ի մեկ այլ բաժին պահանջում է ծախսումը ճանաչել որպես ակտիվի արժեքի մաս:

Կազմակերպությունը ակտիվի օգտակար ծառայությունը որոշելիս պետք է հաշվի առնի հետևյալ բոլոր գործոնները՝

ա) ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը: Օգտագործելիությունը գնահատվում է՝ նկատի ունենալով ակտիվի ակնկալվող հզորությունը և ֆիզիկական թողունակությունը:

բ) ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը, որը կախված է արտադրական գործոններից, օրինակ՝ հերթափոխների քանակը, որոնց ընթացքում ակտիվը պետք է օգտագործվի, ակտիվի վերանորոգման և սպասարկման, ինչպես նաև պարապորդի ընթացքում դրանց պահպանման և սպասարկման կազմակերպության ծրագրից:

գ) տեխնիկական կամ կոմերցիոն հնացածությունը, որն առաջանում է արտադրության մեջ կատարվող փոփոխություններից կամ բարելավումներից, կամ ակտիվի օգտագործումից ստացվող արտադրանքի կամ ծառայության նկատմամբ շուկայի պահանջարկի փոփոխությունից:

դ) ակտիվի օգտագործման իրավական կամ համանման այլ սահմանափակումները, օրինակ՝ ակտիվի վարձակալության ժամկետի ավարտը:

Ընկերությունը հիմնական միջոցների խմբերի նկատմամբ կիրառում է հետևյալ օգտակար ծառայությունները:

Տարի

Շենքեր, կառուցվածքներ	20-40
Փոխանցող հարմարանքներ	20
Մեքենաներ, սարքավորումներ	5-10
Տրանսպորտային միջոցներ	5-10
Այլ հիմնական միջոցներ	1-8

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու (կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու) և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել մաշվածության դրույքաչափերի, ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա այդ ակտիվի մաշվածությունը վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:

Ոչ նյութական ակտիվներ

Բոլոր ոչ նյութական ակտիվները պետք է դիտարկվեն որպես սահմանափակ օգտակար ծառայություն ունեցող: Պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքներից բխող ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը չպետք է գերազանցի պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքների ժամկետը, սակայն կարող է լինել ավելի կարճ՝ կախված այն ժամկետից, որի ընթացքում կազմակերպությունն ակնկալում է օգտագործել ակտիվը: Եթե պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքները փոխանցվում են սահմանափակ ժամկետով, որը կարող է նորացվել, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը պետք է ներառի նորացված ժամկետը (ժամկետները), միայն եթե առկա է վկայություն, որ նորացումը կազմակերպության կողմից կիրականացվի առանց նշանակալի ծախսումների:

Եթե ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը չի կարող արժանահավատորեն գնահատվել, օգտակար ծառայությունը պետք է որոշվի հիմնվելով ղեկավարության լավագույն գնահատականի վրա, սակայն չպետք է գերազանցի տասը տարին:

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով:

Ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է դրա գնման գինը՝ ներառյալ ներկրման տուրքերն ու գնման չփոխհատուցվող հարկերը առևտրային զեղչերը և արտոնությունները հանելուց հետո, ակտիվն իր նպատակային օգտագործման վիճակին բերելու հետ կապված ցանկացած ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները)՝ հանած ցանկացած կուտակված ամորտիզացիա և ցանկացած կուտակված արժեզրկումից կորուստ:

Կազմակերպությունը ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարը պետք է բաշխի պարբերական հիմունքով՝ դրա օգտակար ծառայության ընթացքում: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար հաշվարկված ամորտիզացիայի գումարը պետք է ճանաչվի որպես ծախս, բացառությամբ երբ ՖՀՄՍ-ի մեկ այլ բաժին պահանջում է ծախսումը ճանաչել որպես ակտիվի արժեքի մաս, օրինակ՝ պաշարների կամ հիմնական միջոցների:

Ամորտիզացիան պետք է հաշվարկվի այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար՝ հետևյալ օգտակար ծառայությունից ելնելով:

- Համակարգչային ծրագիր 10 տարի
- Լիցենզիաներ իրավաբանորեն ամրագրված իրավունքի ժամկետում

Ոչ նյութական ակտիվի մնացորդային արժեքը գնահատվում է զրո, իսկ ամորտիզացիայի հաշվարկման կիրառվող մեթոդն է գծային մեթոդը:

Ակտիվների արժեզրկում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատում է՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Ընկերությունը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Եթե առկա է որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել, ապա փոխհատուցվող գումարը գնահատվում է առանձին ակտիվի համար: Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Ընկերությունը որոշում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է տվյալ ակտիվը (ակտիվի դրամաստեղծ միավոր):

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված գումարով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Արժեզրկումից կորստի ճանաչումից հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեգրումը ճշգրտվում է՝ ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը նրա մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով:

Արժեզրկումից կորստի հակադարձմանը վերագրելի ակտիվի ավելացած հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան ամորտիզացիայի կամ մաշվածության), եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Ակտիվի, բացառությամբ գուդվիլի, գծով արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչելուց հետո ապագա ժամանակաշրջանների համար ակտիվի գծով մաշվածության (ամորտիզացիայի) հաշվեգրումը ճշգրտվում է՝ ակտիվի վերանայված հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի (եթե այդպիսին գոյություն ունի) տարբերությունը նրա մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու նպատակով:

Պաշարներ

Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են Ընկերությանը

**«Մեմուր ընդ Կո» ՄՊ Ընկերություն
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են:

Պաշարների ինքնարժեքի մեջ այլ ծախսումները ներառվում են միայն այն չափով, որ չափով դրանք կատարվել են՝ պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար:

Երբ պաշարները ձեռք են բերվում հետաձգված մարման ժամկետով, ապա վճարման նորմալ պայմաններում ձեռքբերման գնի և վճարված գումարի տարբերությունը, ճանաչվում է որպես տոկոսային ծախս ֆինանսավորման ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում:

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը իջեցվում է մինչև իրացման զուտ արժեքի մակարդակ՝ ըստ տեսակների հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Պաշարների ինքնարժեքի ցանկացած իջեցման գումար՝ մինչև իրացման զուտ արժեք, և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը կամ առաջացել է կորուստը:

Պաշարների ցանկացած իջեցման գումարի ցանկացած վերականգնման գումար, որը առաջացել է իրացման զուտ արժեքի աճից, ճանաչվում են որպես պաշարների՝ ծախս ճանաչված գումարի նվազեցում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ տեղի է ունեցել վերականգնումը:

Ոչ իրացվելի պաշարները դուրս են գրվում իրենց հաշվեկշռային արժեքով: Ոչ իրացվելի են այն պաշարները, որոնք չեն իրացվել կամ օգտագործվել հաշվեկշռում հաշվառելուց 12 ամսվա ընթացքում և որոնք հավանական է, որ որևէ այլ ձևով չեն օգտագործվի՝ կապված դրանց բարոյական հնացման, որակի վատացման և այլ պատճառներով:

Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները տոկոսային և այլ ծախսումներն են, որոնք կազմակերպությունը կրում է՝ կապված փոխառու միջոցների ստացման հետ: Փոխառության ծախսումները ներառում են՝

- ա) **արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի** կիրառմամբ հաշվարկված տոկոսային **ծախսը**, ինչպես նկարագրված է 11-րդ՝ *Հիմնական ֆինանսական գործիքներ* բաժնում.
 - բ) **ֆինանսական վարձակալությանը** վերաբերող ֆինանսական վճարները՝ ճանաչված համաձայն 20-րդ՝ *Վարձակալություն* բաժնի.
 - գ) փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են արտարժույթով փոխառություններից՝ այնքանով, որքանով դրանք դիտվում են որպես տոկոսների գծով ծախսումների ճշգրտում:
- Կազմակերպությունը բոլոր փոխառության ծախսումները պետք է ճանաչի որպես ծախս՝ **շահույթում կամ վնասում**՝ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են:
- Փոխառության ծախսումները չեն պահանջում որևէ լրացուցիչ բացահայտում:

Շնորհներ

Ընկերությունը որպես շնորհ հաշվառում է հիմնադիրներից, տեղական և միջազգային կազմակերպություններից ստացված միջոցները, որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով:

Կազմակերպությունը պետական շնորհները պետք է ճանաչի հետևյալ կերպ՝

- ա) շնորհը, որը ստացողի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են.
- բ) շնորհը, որը ստացողի համար սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է.
- գ) ստացված շնորհները, նախքան **հասույթի ճանաչման** չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես **պարտավորություն**:

Կազմակերպությունը շնորհները պետք է չափի ստացված կամ ստացվելիք **ակտիվի իրական արժեքով**:

Կազմակերպությունը շնորհների վերաբերյալ պետք է բացահայտի **Ֆինանսական հաշվետվություններում** ճանաչված պետական շնորհների բնույթը, գումարները և որպես եկամուտ չճանաչված պետական շնորհներին կցված և չկատարված պայմանները և այլ պայմանականություններ:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, Ընկերությունը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՖՀՄՍ-ներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Ընկերությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Ընկերությունը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք: Ընդ որում այդ հաշվարկներում ներառվում է նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասը:

Շահութահարկ

Ընկերության հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից, որոնք ճանաչվում են որպես փոխհատուցում կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ այն մասի, որը վերաբերվում է ձեռնարկատիրական գործունեության միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալին կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային

**«Մեմուր ընդ Կո» ՍՊ Ընկերություն
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Ընկերությունը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում):

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

3. Հասույթ

	2020	2019
Արտադրանքի վաճառքից	5,068,374	4,708,542
Ապրանքների վաճառքից	889,273	973,490
Ծառայությունների մատուցումից	38,387	24,944
	5,996,034	5,706,976

Գործառնական այլ եկամուտներ

	2020	2019
Պաշարների վաճառքից	643,924	672,130
Կրեդիտորական պարտքերի դուրսգրումից	31,556	14,950
Վարձակալությունից	3,700	3,700
Գույքագրումից առաջացած ավելցուկից	1,076	1,198
Նյութական վնասի փոխհատուցումից	2,935	136
Այլ	981	419
	684,172	692,533

4. Ինքնարժեք

	2020	2019
Վաճառված արտադրանքի	4,146,272	4,151,646
Վաճառված ապրանքների	691,142	813,028
Մատուցված ծառայությունների	52,591	47,214
	4,890,005	5,011,888

5. Իրացման ծախսեր

	2020	2019
Աշխատակիցներին հատուցումների գծով	222,867	228,253
Հիմնական միջոցների մաշվածության գծով	30,634	33,831
Հիմնական միջոցների սպասարկման և նորոգման գծով	2,049	1,210
Վառելիքի գծով	42,187	44,079
Մարկետինգի և գովազդի գծով	10,763	13,184
Վարձակալության գծով	40,490	40,305
Այլ ծախսեր	5,109	4,480
	354,099	365,342

«Մեմուր ընդ Կո» ՍՊ Ընկերություն
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

6. Վարչական ծախսեր

	2020	2019
Աշխատակիցներին հատուցումների գծով	160,242	147,812
Հիմնական միջոցների մաշվածության, վերանորոգման գծով	12,606	17,149
Վառելիքի գծով	3,516	5,756
Փոստի և հեռահաղորդակցության գծով	4,288	4,333
Գրասենյակային և կոմունալ գծով	9,426	6,548
Գործուղման և ներկայացուցչական ծախսերի գծով	1,825	3,380
Աուդիտորական և խորհրդատվական ծախսերի գծով	1,800	1,650
Ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով	4,450	4,284
ԱԱՀ պակասեցման գծով	260	12,218
Չնվազեցվող ծախսեր	30	5,916
Չփոխհատուցվող հարկերի գծով	1,644	1,627
Բանկային, ապահովագրության գծով	8,131	7,867
Այլ	8,148	6,372
	216,366	224,912

7. Գործառնական այլ ծախսեր

	2020	2019
Վաճառված պաշարների ինքնարժեք	519,556	584,611
Վարձակալության տրված ՀՄ- մաշվածություն	356	223
Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրում	755	1,364
Արտարժույթի փոխանակումից	50,613	24,627
Այլ	3,785	2,693
	575,065	613,518

8. Ֆինանսական ծախսեր

	2020	2019
Վարկերի գծով տոկոսային ծախսեր	221,665	204,935
Ֆինանսական վարձակալության գծով տոկոսային ծախսեր	7,112	5,571
	228,777	210,506

9. Այլ ոչ գործառնական շահույթ/(վնաս)

«Մեմուր ընդ Կո» ՍՊ Ընկերություն
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Եկամուտ	Ծախս	Շահույթ (վնաս)
2019			
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից	65,711	(18,695)	47,016
Հիմնական միջոցների օտարում	41,850	(28,429)	13,421
	107,561	(47,124)	60,437
2020			
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից	53,800	(256,107)	(202,307)
Հիմնական միջոցների օտարում	4,535	(3,932)	603
	58,335	(260,039)	(201,704)

10. Դրամական միջոցներ

	2020	2019
Ազգային արժույթի դրամարկղ	12,439	96,418
Դրամական միջոցներ հաշվարկային հաշիվներում	267,965	60,156
	280,404	156,574

11. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2020	2019
Արտադրանքի, ապրանքների վաճառքի գծով	34,190	44,552
Մատուցված ծառայությունների գծով	319	101
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով	-	3,770
Վարձակալության գծով	330	330
Տրված ընթացիկ կանխավճարներ	118,827	198,532
Շահութահարկի գծով կանխավճար	1,853	43,995
Հարկերի գծով	98,314	48,240
Այլ	19,163	7,511
	272,996	347,031

12. Պաշարներ

2020	2019
------	------

**«Մեմուր ընդ Կո» ՍՊ Ընկերություն
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Հումք և նյութեր	1,449,874	961,555
Վառելիք	4,324	2,485
Տարա և տարանյութեր	67	68
Պահեստամասեր	1,502	22,766
Շինանյութեր	1,423	6,918
Գյուղատնտեսական նշանակության նյութեր	-	342
Այլ նյութեր	9,551	29,718
Աշխատանքների գծով անավարտ արտադրություն	88,833	88,833
Պատրաստի արտադրանք	242,444	241,844
Ապրանքներ պահեստում	<u>396,623</u>	<u>404,142</u>
	2,194,641	1,758,671

13. Տրված փոխառություններ

	2020	2019
Տարեսկզբի մնացորդ	349,997	176,205
Տրամադրում	139,080	214,350
Մարում	(72,497)	(40,000)
Վերագնահատում	<u>5,831</u>	<u>(558)</u>
	422,411	349,997
Այդ թվում		
Ոչ ընթացիկ	-	-
Ընթացիկ	422,411	349,997

«ՄեՆՈՐ ԸՆԴ ԿՈ» ՄՊ Անկերություն
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

14. Հիմնական միջոցներ

‘000 դրամ	Շենքեր	Կառուցվածքներ	Ծածր տնկարաշում	Մեքենաարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտարժանտեսական գույք, գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Հողամասեր	Ընդամենը
Սկզբնական արժեք									
Առ 01 հունվար 2019թ.	118,935	27,871	900	1,362,722	354,793	60,423	51,048	30,548	2,007,241
<i>Ավելացումներ</i>	5,415	7,230	-	35,559	81,056	5,220	3,886	-	138,366
<i>Նվազեցումներ</i>	-	-	-	(43,454)	(63,111)	-	-	-	(106,565)
Առ 31 դեկտեմբեր 2019թ.	124,350	35,101	900	1,354,827	372,738	65,643	54,934	30,548	2,039,042
<i>Ավելացումներ</i>	-	305	-	21,631	57,949	1,368	3,450	-	84,703
<i>Նվազեցումներ</i>	-	-	-	-	(28,843)	-	-	-	(28,843)
Առ 31 դեկտեմբեր 2020թ.	124,350	35,406	900	1,376,459	401,844	67,011	58,384	30,548	2,094,902
Կրտսավված մաշվածություն									
Առ 01 հունվար 2019թ.	39,203	4,100	732	973,460	209,419	50,664	42,180	-	1,319,758
<i>Ավելացումներ</i>	5,974	1,500	53	115,095	41,297	1,972	3,184	-	169,075
<i>Նվազեցումներ</i>	-	-	-	(43,001)	(28,500)	-	-	-	(71,501)
Առ 31 դեկտեմբեր 2019թ.	45,177	5,600	785	1,045,554	222,216	52,636	45,364	-	1,417,332
<i>Ավելացումներ</i>	4,543	1,394	40	67,657	35,755	1,854	2,442	-	113,685
<i>Նվազեցումներ</i>	-	-	-	-	(24,912)	-	-	-	(24,912)
Առ 31 դեկտեմբեր 2020թ.	49,720	6,994	825	1,113,211	233,059	54,490	47,806	-	1,506,105
Զուտ հաշվեկշռային արժեք									
Առ 01 հունվար 2019թ.	79,732	23,771	168	389,262	145,374	9,759	8,868	30,548	687,483
Առ 31 դեկտեմբեր 2019թ.	79,173	29,501	115	309,274	150,522	13,007	9,570	30,548	621,710
Առ 31 դեկտեմբեր 2020թ.	74,630	28,412	75	263,248	168,785	12,521	10,578	30,548	588,797

15. Հետաձգված ծախսեր

	2020	2019
Տարեսկզբի մնացորդ	112,176	94,386
Ավելացումներ	42,663	23,574
Ամորտիզացիա	(8,082)	(5,784)
	<u>146,757</u>	<u>112,176</u>

16. Վարկեր և փոխառություններ

	2020	2019
Տարեսկզբի մնացորդ	2,437,527	2,476,370
Ավելացումներ	7,015,033	7,835,055
Մարումներ	(7,036,084)	(8,043,257)
Տոկոսներ	218,040	201,326
Փոխարժեքի տարբերություններ	201,558	(31,967)
	<u>2,836,074</u>	<u>2,437,527</u>
Այդ թվում		
Ոչ ընթացիկ	1,990,256	2,039,874
Ընթացիկ	845,818	397,653

17. Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ

	2020	2019
Տարեսկզբի մնացորդ	85,778	72,925
Ավելացում ա. թ.	36,662	61,491
<i>Տրանսպորտային միջոցների լիզինգ</i>	36,662	61,491
Մարումներ	(43,502)	(53,591)
Տոկոսներ	7,112	4,953
	<u>86,050</u>	<u>85,778</u>
Այդ թվում		
Ոչ ընթացիկ	44,410	57,358
Ընթացիկ	41,640	28,420

18. Օվերդրաֆտ

	2020	2019
Տարեսկզբի մնացորդ	47,650	12,017
Ավելացում	1,922,938	103,600
Մարումներ	(1,946,583)	(72,194)
Տոկոսներ	3,624	4,227
	<u>27,629</u>	<u>47,650</u>

19. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2020	2019
Արտադրանքի, ապրանքների, ծառայությունների ձեռքբերման գծով	710,641	718,154
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով	4,200	825
Ստացված կանխավճարների գծով	28,441	24,297
Հարկերի գծով	75,565	12,495
Այլ	214	262
	819,061	756,033

20. Շահութահարկ	2020	2019
Շահույթ (վնասում) ճանաչված շահութահարկի գումար, այդ թվում՝	75,321	3,088
ընթացիկ հարկի գծով գծով	75,321	3,088
հետաձգված հարկի գծով	-	-

Հարկի գործող միջին դրույքի և հարկի կիրառվող դրույքի թվային համադրում	2020	2019
Հարկի կիրառվող դրույք	18%	20%
Շահույթը (վնաս) մինչև հարկումը	214,190	33,780
Ընթացիկ հարկի գծով գծով	75,321	3,088
Չվազեցվող ծախսեր/չհարկվող եկամուտներ	204,260	(18,340)
Հարկվող շահույթը (վնասը)	418,450	15,440
Հարկի գործող միջին դրույքը	35,17%	9,14%

Չկան որևէ նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություններ և չօգտագործված հարկային գեղչեր, որոնց համար ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չի ճանաչվել որևէ հետաձգված հարկային ակտիվ:

21. Այլ բացահայտումներ

Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունը

Ընկերության հիմնական ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ֆինանսական պարտավորությունների հիմնական նպատակն է Ընկերության գործառնությունների ֆինանսավորումը: Ընկերությունը ունի առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, դրամական միջոցներ, որոնք առաջանում են գործառնական գործունեության ընթացքում: Ընկերությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության և շուկայական ռիսկերի: Ընկերության ղեկավարությունը վերահսկում է այդ ռիսկերի կառավարման գործընթացը: Ընկերությունը չի հեջավորում իր ենթարկվածությունը այդ ռիսկերին:

Պարտքային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի մի կողմը իր պարտականությունների չկատարմամբ մյուս կողմի համար կառաջացնի ֆինանսական կորուստ: Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկին՝ կապված գործառնական գործունեության (հիմնականում առևտրային դեբիտորական պարտքեր) հետ:

Վաճառքների գծով պարտքային ռիսկի կառավարումն իրականացվում է հաշվապահության կողմից: Դեբիտորական պարտքերի գծով իրականացվում է կանոնավոր մոնիտորինգ: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացվում է գնորդի համար արժեզրկման (անհավաքագրելիության) ստուգում՝ անհատական հիմունքով: Հաշվարկները սահմանվում են անցյալում փաստացի կրած վնասների հիման վրա: Պարտքերի համար ապահովություն չի պահանջվում: Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Առևտրային դեբիտորական պարտքերի ռիսկի համակենտրոնացումը գնահատվում է ցածր:

Իրացվելիության ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություններ կունենա իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Ընկերությունը իրականացնում է դրամական միջոցների դեֆիցիտի ռիսկի նկատմամբ վերահսկողություն՝ օգտագործելով շարունակական իրացվելիությունը պլանավորելու գործիքը: Բոլոր ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հավասար են չզեղչված պայմանագրային վճարումներին : Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների մարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ հիմնված չզեղչված պայմանագրային վճարումների վրա:

31.12.2020թ.	Ցպահանջ	մինչև 1 տարի	1-ից 5 տարի	Ընդամենը
Վարկեր, փոխառություններ	59,821	855,266	2,054,415	2,969,502
Առևտրական	-	714,841	-	714,841
Կրեդիտորական պարտքեր				
Այլ պարտավորություններ	-	135,220	-	135,220
31.12.2019թ.	Ցպահանջ	մինչև 1 տարի	1-ից 5 տարի	Ընդամենը
Վարկեր, փոխառություններ	-	473,723	2,097,232	2,570,955
Առևտրական	-	718,979	-	718,979
Կրեդիտորական պարտքեր				
Այլ պարտավորություններ	-	37,054	-	37,054

Շուկայական ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է երեք տեսակի ռիսկ՝ արժույթային ռիսկ, տոկոսադրույքային ռիսկ և այլ գնային ռիսկ: Շուկայական ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, գնումների գծով կրեդիտորական պարտքերը, ֆինանսական երաշխավորության պայմանագրերը, վաճառքների գծով դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները:

Արժույթային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի փոխարժեքների փոփոխության ռիսկին ենթարկվում է արտարժույթով վարկերը, գնումների գծով կրեդիտորական պարտքերը: Արժույթները, որոնք հիմնականում առաջացնում են նման ռիսկ, հետևյալն են՝ ԱՄՆ դոլար, Եվրո: Ընկերությունը չունի արտարժույթով գնանշված ֆինանսական գործիքներ:

Տոկոսադրույքային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Տոկոսադրույքի փոփոխությունները գլխավորապես ազդում են վարկերի վրա՝ փոփոխելով նրանց իրական արժեքը: Ստացված վարկերը ֆիքսված և փոփոխվող տոկոսադրույքով են: Տոկոսադրույքների փոփոխությունների զգայունության վերլուծության շրջանակներում բազիսային միավորներում փոփոխությունների վերաբերյալ ենթադրությունները հիմնված են տվյալ պահին շուկայում դիտարկվող վիճակի հիման վրա, ինչը բնորոշում է նախորդ տարիների հետ համեմատած նշանակալի փոփոխականությունը:

Այլ գնային ռիսկ

Այն բանի ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայական գների փոփոխությունների (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժույթային ռիսկից առաջացողներից) արդյունքում, անկախ այն բանից, թե այդ փոփոխությունները պայմանավորված են առանձին ֆինանսական գործիքին կամ դրա թողարկողին հատուկ գործոններով, թե շուկայում շրջանառվող բոլոր նմանատիպ ֆինանսական գործիքների վրա ազդող գործոններով: Այլ գնային ռիսկերի ազդեցությունը էական չէ:

Կապակցված կողմերի բացահայտումներ

Կապակցված կողմերի փոխհարաբերությունների բնույթը

Անվանումը	Բնույթը
Մասնակից՝	Գուրգեն Վիրաբյան (100%)

Կապակցված կողմերի հետ գործարքներ

000 դրամ

	Առևտրական գների պարտքեր /Ստացված կանխավճարներ/	Առևտրական կրեդիտորական պարտքեր /Տրված կանխավճարներ/	Ներդրում	Տրված վարձակալություն	Ստացված վարձակալություն	Շահարածին	Տրված փոխառություններ	Ստացված փոխառություններ
Մնացորդ 31.12.2019թ.	-	-	-	330	-	-	144,911	-
Ավելացում	7,702	1,440	-	4,440	-	31,000	349,997	248,521
Նվազեցում	7,442	1,440	-	4,440	-	-	72,497	188,700
Մնացորդ 31.12.2020թ.	260	-	-	330	-	31,000	422,411	59,821

Առանցքային կառավարչական անձնակազմին հատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմին կարճաժամկետ հատուցումները (աշխատավարձ) 2020թ. կազմել է 69,992 հազար դրամ և 2019թ.՝ 57,422 հազար դրամ: Առանցքային կառավարչական անձնակազմին այլ հատուցումներ չեն եղել:

Ֆինանսական հաշվետվությունների վավերացում

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2021թ. հունիսի 29-ին՝ տնօրեն Գուրգեն Վիրաբյանի և գլխավոր հաշվապահ Էլենոնորա Գևորգյանի կողմից:


Տնօրեն Գուրգեն Վիրաբյան




Գլխ. հաշվապահ Էլենոնորա Գևորգյան